ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

#46

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Շարունակվում է համագործակցությունը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի և ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի միջև՝ կրթահամալիրում վերապատրաստում անցնող ոստիկանների համար դասընթացների կազմակերպման համատեքստում:

«ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ». ՆՍՀԿ ԴԱՍԸՆԹԱՑԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

2021 թվականի հունիսի 29-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն անցկացրեց «Գենդերային հավասարություն» թեմայով դասընթաց ՀՀ Ոստիկանության կրթահամալիրում վերապատրաստում անցնող սպաների համար: Դասընթացի սկզբում ծրագրի համակարգող Ալինա Միրզոյանը ողջունեց բոլոր մասնակիցներին, ներկայացրեց կազմակերպությունը և

ՔՈԼԵՋՈՒՄ ՈՒՍԱՆՈՂԻՆ ԾԵԾԻ ԵՆ ԵՆԹԱՐԵԿԼ ԻՐ ՍԵՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

2021թ-ի հունիսի 29-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ (ՆՍՀԿ) է դիմել նույնասեռական անձ Ս.Հ.-ն (անունը փոխված է): Վերջինս հայտնել է, որ քոլեջում իր սեռական կողմնորոշման մասին տեղեկության տարածվելուց հետո մշտապես խնդիրներ է ունեցել քոլեջի ուսանողների հետ: Վերջիններս պարբերաբար վիրավորել են, ծաղրել: Ս.Հ.-ն փորձել է հեռու մնալ ուսանողներից, որպեսզի իրավիճակը չբարդացնի:

«ԱՍՏՎԱԾ ԱՅԴ ԱՂՈԹՔԻՍ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՉՏՎԵՑ»

«ԼԳԲՏԻ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս) համայնքն ու Սուրբ գիրքը»՝ լսելով լրագրողական հերթական թեման՝ միանգամից հասկացա, որ ինձ հեշտ փորձություն չի սպասվում: Համայնքի ներկայացուցիչները պիտի հակադրվեին հոգևոր այրերին, վերջիներս մեղադրեին այդ մարդկանց: Այնուամենայնիվ, ներկայացնելով հոդվածը՝ եզրահանգումը թողնում եմ ընթերցողին:

ՖՈՆԴԱՀԱՅԹԱՅԹՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՍՊԵՑԻՖԻԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2021 թվականի հուլիսի 28-29-ը Երևանում տեղի ունեցավ երկօրյա դասընթաց «Ֆոնդահայթայթումը և դրա սպեցիֆիկությունը հասարակական կազմակերպությունների համար» թեմայով: Դասընթացին մասնակցում էին Տրանս* անձանց հայաստանյան աշխատանքային խմբում (ՏԱՀԱԽ) ներգրավված հասարակական կազմակերպությունների («Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ, «Հանուն հզոր ապագայի» երիտասարդական ՀԿ, «Ֆիռլես» իրավապաշտպան ՀԿ, «Հավասարություն բոլորի համար» իրավապաշտպան ՀԿ, «Քալրֆուլ հաուս» սոցիալ-մշակութային և իրավապաշտպան ՀԿ) ներկայացուցիչներ:

www.ngngo.net

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ SUS ԱՆՁԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՄԻԱՎ-ԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

2021 թվականի հուլիս 23-ին տեղի ունեցավ «Հայաստանում SUS անձանց տրամադրվող ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների վերլուծության ներկայացում» հանդիպում-քննարկումը, որը կազմակերպվել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից Եվրասիական տարածաշրջանային կոնսորցիումի մաս կազմող Առողջության, իրավունքի, սեռական և գենդերային բազմազանության եվրասիական կոալիցիայի (ԵԿՈՄ) դրամաշնորհի շրջանակներում քաղաքացիական հասարակության ցանցերի Ռոբերտ Կարրի հիմնադրամի (RCF) ֆոնդերի հաշվին:

Հանդիպմանը մասնակցում էին SUS և տրանս* անձանց հիմնախնդիրներով զբաղվող ոլորտային հասարակական կազմակերպությունների, ՀՀ Առողջապահության նախարարության, ՀՀ ԱՆ Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի, ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համարգող հանձնաժողովի (ՄՀՀ), ինչպես նաև SUS համայնքի ներկայացուցիչներ:

Հանդիպման սկզբում բացման խոսքով հանդես եկավ ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը՝ շնորհակալություն հայտնելով հյուրերին հրավերը ընդունելու և հանդիպմանը ներկա գտնվելու համար: Նա նաև հյուրերին ծանոթացրեց հանդիպման օրակարգին:

Հանդիպման խոսնակներից առաջինը ԵԿՈՄ-ի կարողությունների զարգացման համակարգող Օլենա Գերմանն էր, որը ներկայացրեց «ՄԻԱՎ-ի ծառայությունների հայաստանյան կասկադի և տարածաշրջանային այլ կասկադների համեմատությունը»՝ խոսելով ՄԻԱՎ-ի կանխարգելման ՄԱԿ-ի ցուցանիշներից, այդ ցուցանիշներին հասնելու ուղղությամբ իրականացված և նախատեսվելիք աշխատանքներից, ինչպես նաև SUS անձանց շրջանում ՄԻԱՎ-ի և ՍՃՓՎ-ի կանխարգելմանն ուղղված համակարգային ծառայությունների իրականացման գործիքից՝ MSMIT:
Մյուս խոսնակը ազգային փորձագետ Հմայակ Ավետիսյանն էր, որը ներկայացրեց ««Հայաստանում SUS անձանց տրամադրվող ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների վերլուծությունը»՝ խոսելով հետազոտության նպատակի, խնդիրների, կառուցվածքի և մեթոդների, ինչպես նաև ըստ 5 բաժինների («Համայնքային զարգացում», «SUS անձանց նկատմամբ բռնության հասցեավորում», «Պահպանակների և լուբրիկանտների ծրագիր», «Առողջապահական ծառայությունների մատակարարում», «Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործում»)՝ վերլուծության ընթացքում դիտարկված խնդիրների, բացերի մասին: Ելույթի վերջում ներկայացվեցին առաջարկություններ և եզրակացություն, որոնք հետագայում ամփոփվելու են ադվոկացիոն պլանի մեջ:

Հանդիպման մասնակիցները ակտիվ քննարկում ունեցան վերլուծությունների վերաբերյալ, հանդես եկան առաջարկություններով և դիտարկումներով, որոնք հաշվի կառնվեն հետագայում ադվոկացիոն պլանի մշակման գործընթացներում: Հանդիպումն անցավ ակտիվ հարց ու պատասխանի, քննարկումների մթնոլորտում:

ՀՀ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՎ-Ի ԵՎ ՁԻԱՀ-Ի, ԱՅԴ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ. ՖՈԿՈՒՍ ԽՈՒՄԲ ՔՆՆԱՐԿՈՒՄ

2021թ.-ի հուլիսի 2-ին տեղի ունեցավ առաջին ֆոկուս խումբ քննարկումը ՀՀ երիտասարդների հետ «Երիտասարդությունը որպես ՄԻԱՎ համաճարակի տեսակետից թիրախ խումբ ճանաչելու արդիականության» վերաբերյալ հետազոտության շրջանակներում: Ֆոկուս խմբի փորձագետն էր բ.գ.թ. Հովհաննես Մադոյանը:

Տվյալ ֆոկուս խումբ քննարկման մասնակիցներն էին ՀՀ բուհերում ուսանող արական սեռի երիտասարդները:

Հանդիպման նպատակն էր քննարկել ՀՀ երիտասարդության իրազեկվածությունը ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի վերաբերյալ, ՀՀ երիտասարդների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրականացվող աշխատանքները, երիտասարդության շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ թիրախային աշխատանքներ իրականացնելու կարևորության մասին:

Քննարկվեցին և հնչեցին կարծիքներ նաև «Առողջ ապրելակերպ» առարկայի շրջանակներում դասավանդվող ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի թեմայի մասին և ընդհանուր առմամբ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ ինչպիսի՞ միջոցառումներ է ցանկալի իրականացնել երիտասարդության շրջանում:

Տվյալ հետազոտության համատեքստում նախատեսվում են նաև ևս երեք ֆոկուս խումբ հանդիպում-քննարկումներ՝ երիտասարդների տարբեր խմբերի, մասնավորապես բուհերում ուսանող աղջիկների, բուհերում չսովորող երիտասարդ աղջիկների և տղաների հետ՝ հետազոտության համար առավել համապարփակ պատկեր ստանալու համար:

ԱՆՁԱՆՑ ԾԵԾԻ ԵՆ ԵՆԹԱՐԿԵԼ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԵՆԹԱԴՐՅԱԼ ՍԵՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

2021թ-ի հունիսի 15-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ (ՆՍՀԿ) է դիմել տրանս անձ, ՆՍՀԿ շահառու Դ.Մ.-ն (անունը փոխված է): Վերջինս հայտնել է, որ իր ընկերների հետ զբոսնելիս է եղել, երբ մի խումբ անձինք՝ ենթադրություններ անելով վերջիններիս սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ նրանց հետևից վիրավորական արտահայտություններ են արել և հայհոյել: Դ.Մ.-ն ու նրա ընկերները, հասկանալով պահի լրջությունը, անտեսել են այդ ամենը և շարունակել իրենց զբոսանքը: Սակայն այդ անձինք, հետապնդելով Դ.Մ.-ին ու նրա ընկերներին, հարձակվել են վերջիններիս վրա, ոտքերով խփել և ձեռքերով քաշքշել են: Դ.Մ.-ն և նրա ընկերները վնասվածքներ չեն ստացել, միայն հագուստներն են պատռվել:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ իրավաբանի կողմից տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն, առաջարկվել է դեպքի առթիվ հանցագործության մասին հաղորդում ներկայացնել: Սակայն վերջիններս հրաժարվել են:

Համաձայն ՆՍՀԿ-ի դեպքերի վերլուծության՝ Հայաստանում 2020-2021թթ-ին սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության, բռնության և խոշտանգման դեպքերի աճ է արձանագրվել : Այս դեպքը գալիս է ևս մեկ անգամ վկայելու, որ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության պատճառով անձանց նկատմամբ հասարակության խտրական և անհանդուրժող վերաբերմունքն առավել խորն է և բռնկուն:

Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում տրանս* անձանց վերաբերյալ ռազմավարական տեղեկության մակարդակը շատ ցածր է, ինչը հանգեցնում է մի շարք մարտահրավերների և ռեսուրսների պակասի՝ մարտահրավերները հաղթահարելու համար:
Գոյություն ունեցող բացերը և մարտահրավերները հասցեավորելու համար 2019 թվականի սեպտեմբերից մեկնարկել է «Տրանս* քարտեզը ԱԵԿԱ-ում» ծրագիրը, որի հայաստանյան կոմպոնենտը իրականացնում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ):
Ազգային մակարդակում տրանս* անձանց առանձնահատուկ խնդիրները և մարտահրավերները հասցեավորելու համար հավաքվել է փորձագիտական խումբ՝ կազմված երեք անձանցից (Ալինա Միրզոյան՝ առաջնորդող անձ, Արման Սահակյան և Հմայակ Ավետիսյան), որոնք պետք է մշակեն հայաստանյան ազգային ադվոկացիոն պլանը (ԱԱՊ):

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՖՈԿՈՒՍ-ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԱԴՎՈԿԱՑԻՈՆ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վստահելի և արժանահավատ ԱԱՊ մշակելու և տրանս* անձանց ձայնը լսելի դարձնելու համար՝ 2021 թվականի հունիսի 22-ին Երևանում տեղի ունեցավ ֆոկուս-խմբային քննարկում (ՖԽՔ) փորձագիտական խմբի և Տրանս* անձանց հայաստանյան աշխատանքային խմբի (ՏԱՀԱԽ) անդամների մասնակցությամբ:
ՖՔԽ-ի բացման խոսքով հանդես եկավ ՆՍՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը, որը ևս մեկ անգամ կարևորեց ՏԱՀԱԽ-ի ձևաչափը և գործունեությունը, հորդորեց լինել ակտիվ և պահանջատեր, խմբում տրանս* անձանց հետ աշխատող կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ լսելի դարձնել իրենց շահառուների կարծիքները բոլոր տեսակի հանդիպում-քննարկումների ընթացքում:
ՖՔԽ-ի սկզբում մասնակիցներին ներկայացվեց ամբողջ հնարավոր տեղեկությունը, որը վերաբերում է Հայաստանում տրանս* անձանց իրավիճակին, իսկ այնուհետև հարցերի ու քննարկման միջոցով վեր հանվեցին այն կարևոր կետերը, որոնք պետք է ներառվեն ԱԱՊ-ում:
ՖՔԽ-ն անցավ չափազանց ակտիվ քննարկումների միջավայրում: Արդյունքում ստացված ինֆորմացիան և կարևոր կետերը կօգնեն ազգային փորձագիտական խմբին մշակել տրանս* կարիքահեն ԱԱՊ:

«ԱՍՏՎԱԾ ԱՅԴ ԱՂՈԹՔԻՍ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՉՏՎԵՑ»

«ԼԳԲՏԻ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս) համայնքն ու Սուրբ գիրքը»՝ լսելով լրագրողական հերթական թեման՝ միանգամից հասկացա, որ ինձ հեշտ փորձություն չի սպասվում: Համայնքի ներկայացուցիչները պիտի հակադրվեին հոգևոր այրերին, վերջիներս մեղադրեին այդ մարդկանց: Այնուամենայնիվ, ներկայացնելով հոդվածը՝ եզրահանգումը թողնում եմ ընթերցողին:

«Քրիստոսի տարիքին ես՝ 33 տարեկան. նախանշա՞ն»

«33 տարեկանում հասկացա, որ նույնասեռական եմ: Առաջին անգամ ցանկություն ունեցա սեռական հարաբերություն ունենալ տղամարդու հետ: Զուգընկերս մանկության ընկերս էր»,–պատմում է Արգամն ու շարունակում, որ ինքն էլ չէր հավատում, որ այդպես կստացվի: «Չեմ թաքցնի, հաճելի էր ինձ, բայց մի միտք հանգիստ չէր տալիս ինձ: Մտածում էի՝ Աստվա՛ծ իմ,մե՞ղք գործեցի, ի՞նչ է լինելու իմ հետագա կյանքը»,– 14 տարի անց հիշում է Արգամը: Նա հոգեբանի մոտ ընդունելության գնաց: «Ասաց՝ արտառոց ոչինչ չկա, մարդ ես, հիմա էդ հակումներն ունես, միայն զարմանալի է, թե ինչու այդ տարիքում ցանկությունդ բացահայտվեց: Ընդհանրապես, այդ հակումները ավելի վաղ տարիքում են ի հայտ գալիս»,–ասում է Արգամը: Մեղքի զգացումը հանգիստ չէր տալիս նրան, որոշում է եկեղեցի մտնել ու քահանայի հետ զրուցել: «Ծննդոց գրքից հատված ասաց՝ անգիր եմ արել: Եվ Աստված ստեղծեց

մարդուն իր պատկերով. Աստծու պատկերով ստեղծեց նրան. արու և էգ ստեղծեց նրանց: Աստուած օրհնեց նրանց ու ասաց. «Աճեցէ՛ք, բազմացէ՛ք, լցէ՛ք երկիրը, տիրեցէ՛ք դրան, իշխեցէ՛ք ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրայ սողացող բոլոր սողունների վրայ»: Հետո խրատեց՝ տղա՛ս, Աստծո գործերն անքննելի են, և չպետք է խառնվել: Դու կարող ես փրկվել»,–ասում է Արգամը:

Ի դեպ, զրուցակիցս հիշում է, որ հոգևոր հայրն էլ տարիքը առանձնացրեց: «**Որդյա՛կ իմ, Քրիստոսի տարիքին ես՝ 33 տարեկան:** Գուցե սա Աստծո նշա՞նն է, որ դու պիտի ապաշխարես ու փրկվես»,–ասել էր քահանան Արգամին: Արգամի խոսքով՝ ինքը միշտ եկեղեցի է գնում, աղոթում, մոմ վառում, բայց «շարունակում է նույնասեռական մնալ»: «**Երկնային կյանքս գուցե դժոխքո՞ւմ անցկացնեմ կամ գուցե մինչև կյանքիս վերջը ապաշխարեմ, բայց ինձ հաճելի է իմ կերպարը, ինչո՞ւ է Աստված դեմ»,**

–հռետորական հարցն է բոլորին ուղղում Արգամը:

Մե՞ղք, թե՞ մոլորություն

Ըստ հոգևոր այրերի՝ Աստվածաշնչում նույնասեռական վարքագծի մերժումը արդեն իսկ Ծննդոց գրքում է՝ Սոդոմի և Գոմորի պատմության մեջ, որի կործանման պատճառը հիմնականում նույնասեռական մեղքի վարքագիծն էր և կենցաղավարությունը: Բագրատ եպիսկոպոս Գալուստանյանի խոսքով՝ Աստվածաշունչը և Սուրբ Եկեղեցու ուսմունքը աներկբա մերժում են նույնասեռական հարաբերությունները՝ այն համարելով աստվածաստեղծ մարդկային բնության խախտում:

Սրբազան հոր պատմելով՝ ոմանք կարծում են՝ Հին Կտակարանի բարոյագիտական թելադրանքները պետք է այլ կերպ դիտարկել, քանի որ դրանց մեծ մասը վերաբերում էին ծիսական ընկալմանը և պահանջներին, ինչպես օրինակ խոզի միս չուտելը, թլպատությունը և այլն, որոնք այսօր այլևս պարտադիր չեն նկատվում: «Այս մոտեցումը սխալ է, քանի որ եթե նույնիսկ ծիսական պահանջներն այլևս պարտադրող չեն, այսուհանդերձ բարոյական թելադրությունները պարտադիր են: Այսինքն՝ թեև Աստծուն ընծայվող ծիսական արարողությունները ենթակա են փոփոխության տարբեր ժամանակների և մշակույթների մեջ և համար, բարոյական և բարոյագիտական պահանջները հավիտենական են և պարտադիր բոլոր մշակույթների համար»,–համոզված է Բագրատ Սրբազանը: «**Չգիտե՞ք, թե անիրավներն Աստծու արքայությունը չեն ժառանգում. մի՛ խաբվեք. ո՛չ պոռնիկներ, ո՛չ կռապաշտներ, ո՛չ շնացողներ, ո՛չ իգացողներ, ո՛չ արվամոլներ, ո՛չ գողեր, ո՛չ ագահներ, ո՛չ հարբեցողներ, ո՛չ բամբասողներ, ո՛չ էլ հափշտակողներ Աստծու արքայությունը չպիտի ժառանգեն»,–գրված է Աստվածաշնչում:**

Մերժում են մեղքը, ընդունում մեղավորին

ԼԳԲՏԻ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս) քրիստոնյաների ֆորումի անդամ Էդուարդի համոզմամբ՝ կրոնը մի մեխանիզմ է, որ կառավարում է մարդկանց: Էդուարդը հավատացյալների ընտանիքում է մեծացել, հավատում է Աստծուն: 30 տարեկան է, մինչև 23 տարեկանը փորձել է ապաշխարել: «Հավատացյալ լինելով՝ փորձել եմ բժշկվել, եթե ասում են հիվանդություն է, փորձել եմ ապաշխարել, եթե մեղք է: «**Հասկացա, որ հիվանդություն չէ, մեղք չէ:** Միշտ աղոթել եմ, ու աղոթքներիս պատասխանները շուտ ստացել եմ: Օրեր շարունակ աղոթել եմ, որ Աստված ինձ ազատի այս «չարիքից» **(նկատի ունի նույնասեռական լինելը–խմբ.)**, բայց դրա պատասխանը չեմ ստացել: Հասկացա, որ այդպես էլ պիտի լինի, քանի որ Աստված ինձ այդ ժամանակ էլ կպատասխաներ»,–ասում է Էդուարդը:

Տեր Եսայի քահանա Արթենյանը համամիտ չէ Էդուարդի տեսակետի հետ: Տեր Եսայու խոսքով՝«ինքնարդարացման անհաջող տարբերակ է»: Զրուցակիցս նշում է, որ ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչներին ոչ մեկը չի արգելում եկեղեցի գալ, մասնակցել ծիսական արարողություններին: «Նման մարդկանց ոչ մեկը չի արգելում եկեղեցի գալ, մասնակցել արարողություններին, բայց այդ երևույթը միանշանակ մերժում ենք: Այլ կերպ ասած՝ մերժում ենք մեղքը, ընդունում մեղավորին»,–ասում է տեր Եսային:

Էդուարդը, աշխատանքի բերումով, համարյա ամեն օր, շփվում է ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչների հետ: «Կարծրատիպ կա, որ եթե լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս ես, չես կարող հավատացյալ լինել: Բայց այստեղ ոչ մի արգելանք չկա, Քրիստոնեությունը քարոզում է

հանդուրժողականություն, Սեր ու զարմանալի է ինչո՞ւ են քարկոծում ԼԳԲՏԻ համայնքին»,– ասում է Էդուարդը: «Եկեղեցու հայրերը հորդորում են մարդու նկատմամբ հանդուրժող լինել, բայց ոչ մեղքի»,–ի պատասխան ասում է տեր Եսային:

Բագրատ Սրբազանի խոսքով՝ նույնասեռական կիրքը, ինչպես մյուս կրքերը, որոնք տառապանք են պատճառում անկում ապրած մարդուն, մարդկային բնության խեղումն է մեղքի պատճառով, որը կարող է հաղթահարվել հոգևոր իմաստով: «Ապաքինման՝ աղոթքով, պահեցողությամբ, ապաշխարությամբ, Աստվածաշնչի և հայրերի գրությունների ընթերցանությամբ և սերտողությամբ՝ ներգրավված լինելով հավատացյալների միջավայրում, ովքեր պատրաստ են հոգևոր աջակցություն ցուցաբերելու»,–ասում է Սրբազանն ու միտքը ավարտում Սուրբ Գրքից մեջբերմամբ:

«Այսպես ուրեմն՝ ով կարծում է, թէ կանգնած է հաստատ, թող զգույշ լինի, գուցե թե ընկնի: Ձեր վրա ոչ մի փորձություն չի եկել, բացի մարդկանցից եկածից: Բայց հավատարիմ է Աստված, որ ձեզ ավելի փորձության մեջ չի գցելու, քան կարող եք տանել. այլ՝ փորձության հետ փրկության ելք էլ է ցույց տալու, որպեսզի կարողանաք համբերել (Ա.Կորնթ. Ժ:12,13)»:

Սերը ոչնչացնելն ավելի մեծ մեղք է....

ԼԳԲՏԻ համայնքն ու Սուրբ գիրքը. իհարկե, թեման երկու–երեք էջում չես կարող տեղավորել, այն անսպառ է, վիճելի ու թերևս առաջիկայում լրագրողական հետաքննություն կսկսեմ: Իսկ այս հոդվածը, թերևս, ավարտեմ տարիներ առաջ ԼԳԲՏԻ քրիստոնյաների ֆորումին մասնակցած հայաստանցի Ալեքսի տեսակետով: Ըստ նրա՝ «նույնասեռական լինելը մեղք չէ, մարդն ինքն իրեն սեռական կողմնորոշում չի ընտրում»:

Ալեքսի համոզմամբ՝ Աստվածաշնչում շատ ավելի մեծ քանակով զգուշացումներ ու սահմանափակումներ կան տարասեռականների (հետերոսեքսուալների), քան թե նույնասեռականների համար:

«Աստվածաշնչի մեջ կարելի է ամեն ինչ էլ գտնել: Աստվածաշունչը մի գիրք է, որը պարունակում է պատմվածքներ, դրամաներ, նույնիսկ բաժակ նայելով գուշակություն: Եթե մենք Աստվածաշնչով առաջնորդվեինք, ըստ Հին Կտակարանի, ապա մենք պետք է կանանց քարկոծեինք, եթե օրինակ նրանք կույս չլինեին, հետո քարկոծել չար ու ծնողներին չենթարկվող երեխաներին:

Սա հաշվի առնելով՝ ես նրանց կասեի՝ եկե՛ք ապրենք Հիսուս Քրիստոսի պատգամով. սիրի՛ր մերձավորիդ, ինչպես ինքդ քեզ: Եվ որ մենք սիրենք զմիմեանս: Նաև կուզենայի ընդգծել, որ ես նրանց կոչ չեմ անում սիրել մեղքը, քանի որ սերը մեղք չէ:

Եթե տղան տղայի է սիրում, եթե աղջիկը աղջկա է սիրում, մենք ոչ մի դեպքում չպետք է փորձենք կոտրել կամ ոչնչացնել սերը, և սերը ոչնչացնելն ավելի մեծ մեղք կլինի»,–ասում է Ալեքսը:

Արմեն Դավթյան

ՆՍՀԿ ՇԱՀԱՌՈՒԻՑ ՊԱՀԱՆՋԵԼ ԵՆ ԳՈՒՄԱՐ ԻՐ ՍԵՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՉՏԱՐԱԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

2021թ-ի հունիսի 25-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ (ՆՍՀԿ) է դիմել ՆՍՀԿ շահառու, նույնասեռական անձ Ի.Լ.-ն (անունը փոխված է): Վերջինս հայտնել է, իրեն հետապնդում են, սպառնում իր սեռական կողմնորոշման մասին տեղեկությունները տարածել իրենց շենքում: Որպեսզի Ի.Լ-ի անձնական տեղեկությունները չտարածեն նրանից պահանջել են խոշոր չափերի գումար:

Դիմելով ՆՍՀԿ, Ի.Լ-ն խնդրել է, որ Կազմակերպության անունից հաղորդում ներկայացվի, քանի որ նա չի ցանկանում գնալ ոստիկանություն: Վերջինս իր մտավախությունն է հայտնել, որ հնարավոր է ենթարկվի կրկնակի խտրականության և իր սեռական կողմնորոշման մասին տեղեկատվությունը կտարածվի:

ՆՍՀԿ իրավաբանի կողմից տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն: Դիմողին ներկայացվել են ՀՀ օրենքով սահմանված հաղորդում ներկայացնելու կարգը:
Գործը գտնվում է ՆՍՀԿ իրավաբանների/փաստաբանների հսկողության ներքո:

Պարզաբանում.

ՀՀ քրական օրենսգրքի հոդված 182

Շորթումը՝ անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու, ինչպես նաև անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով կամ անձի, նրա մերձավորի գույքը կամ այլ անձանց տնօրինության կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու (վնասելու) սպառնալիքով ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու կամ գույքային բնույթի այլ գործողություններ կատարելու պահանջը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ կալանքով:

«ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ». ՆՍՀԿ ԴԱՍԸՆԹԱՑԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

2021 թվականի հունիսի 29-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն անցկացրեց «Գենդերային հավասարություն» թեմայով դասընթաց ՀՀ Ոստիկանության կրթահամալիրում վերապատրաստում անցնող սպաների համար: Դասընթացի սկզբում ծրագրի համակարգող Ալինա Միրզոյանը ողջունեց բոլոր մասնակիցներին, ներկայացրեց կազմակերպությունը և գործունեության ոլորտները, դասընթացի նպատակը, թեմաները, փորձագետին, նաև շնորհակալություն հայտնեց կրթահամալիրին շարունակական համագործակցության ապահովման համար:

Ողջույնի խոսքից և ծանոթացումից հետո դասընթացի փորձագետ, ՆՍՀԿ իրավաբան Շուշան Խնկոյանը ներկայացրեց «Գենդերային հավասարություն» թեման՝ նախ անդրադառնալով մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաև խտրականություն թեմային: Այնուհետև, փորձագետը խոսեց «Գենդերային հավասարություն» թեմայից՝ ներկայացնելով վիճակագրություն, ոլորտում առկա բացերը, կարգավորման մեխանիզմները:

Դասընթացավարը ներկայացրեց միջազգային փաստաթղթեր, որոնք առնչվում են թեմային՝ հատկապես առանձնացնելով «Ստամբուլյան կոնվենցիան», «Լանզարոտեի կոնվենցիան», իրական նպատակները և նրա շուրջ ձևավորված միֆերը:

Ամբողջ դասընթացն ուղեկցվում էր ակտիվ հարց ու պատասխաններով, բուռն քննարկումներով:

ՆՍՀԿ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՓԱՍՏԻ ԱՌԹԻՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԸ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԻ ԵՂԵԼ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ. ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018թ.-ի հոկտեմբերի 27-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի (ՆՍՀԿ) գրասենյակի դիմաց կայանված ՆՍՀԿ-ին պատկանող ավտոմեքենային երեկոյան ժամի անհայտ ավտոմեքենա էր հարվածել ու դիմել փախուստի: Կատարվածը տեսագրվել էր մոտակայքում տեղադրված տեսախցիկի կողմից: Դեպքի առթիվ Կազմակերպության նախագահը հաղորդում էր ներկայացրել՝ տրամադրելով տեսագրության կրիչը: Դրանից հետո շուրջ 3 ամիս ոչ մի տեղեկություն կատարվածի վերաբերյալ՝ քննության, մեղավորին հայտնաբերելու, ինչպես նաև այլ քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ, Կազմակերպությունը չի ստացել: Ավելին, գործի ընթացքի վերաբերյալ հնարավոր չի եղել ստանալ տեղեկություն նաև Ս.Գաբրիելյանի՝ անձամբ ոստիկանություն կրկին այցելելուց հետո: Մինչդեռ

Անվճար իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար զանգահարել

+37460478989

հեռախոսահամարին, կամ այցելել ՆՍՀԿ գրասենյակ, Թումանյան 10, բն.7

www.ngngo.net

տեսագրությունից պարզ է դառնում, որ ճանապարհային ոստիկանություն (ՃՈ) էր ժամանել դեպքի վայր, քանի որ բացի Կազմակերպությանը պատկանող ավտոմեքենայից, անհայտ վարորդը նաև հարվածել էր դիմացը կանգնած մյուս մեքենային: Կազմակերպությունը 29.01.2019թ. ՀՀ Ճանապարհային Ոստիկանությանն ուղարկված գրությամբ խնդրել էր տրամադրել տեղեկատվություն գործի ընթացքի վերաբերյալ, սակայն հարցմանը ոչ գրավոր, ոչ բանավոր պատասխան չէր տրվել:

Կազմակերպությունը ստիպված 2019թ.-ին դատական հայց էր ներկայացրել ՀՀ Ոստիկանության ՃՈ ծառայության՝ եռօրյա ժամկետում հայցվորի գրությանն ըստ էության պատասխանելուն պարտավորեցնելու պահանջի մասին: Արդյունքում 2019թ-ի նոյեմբերի 20-ին ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից բավարարվել էր հայցը: Դատարանը որոշում էր կայացրել պարտավորեցնել պատասխանողին եռօրյա ժամկետում ըստ էության պատասխանել հայցվորի 29.01.2019թ. թիվ NG-02-015-1901 գրությանը և հօգուտ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի բռնագանձել հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի գումարը և հայցվորի ներկայացուցչի վճարը: Գործով 2020թ-ի հոկտեմբերի 23-ին ՀՀ հարկադիր կատարման ծառայության կողմից հարուցվել էր կատարողական վարույթ:
ՆՍՀԿ-ն բազմիցս դիմել է ՀՀ Ոստիկանության ՃՈ ծառայությանը, ինչպես նաև հարկադիր կատարման ծառայությանը՝ խնդրելով հանձնարարել տրամադրել գրության պատասխանը, սակայն որևէ արձագանք չի ստացել:

ՆՍՀԿ-ի հերթական դիմումին ի պատասխան 2021թ-ի հուլիսի 8-ին ստացվել է ՀՀ հարկադիր կատարման ծառայության պատասխանը, որին կից ներակայացվել է ՀՀ Ոստիկանության ՃՈ ծառայության գրությունը: ՀՀ Ոստիկանության ՃՈ ծառայությունից տեղեկացնում են, որ 2019թ-ի հունվարի 29-ի գրությանը հնարավոր չէ պատասխանել, քանի որ այն վերաբերում է 2018թ-ի հոկտեմբերի 27-ի Երևան քաղաքի Թումանյան փողոցում տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի փաստի առթիվ նախապատրաստված նյութերին, որոնք հնարավոր չի եղել հայտնաբերել, ինչի կապակցությամբ Ճանապարհային ոստիկանությունում կատարվում է ծառայողական քննություն:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն դատապարտում է ՀՀ Ոստիկանության ՃՈ ծառայության նման անփույթ գործելաոճը: Նման անգործության հետևանքով շատ հանցագործություններ չեն բացահայտվում, հանրության վստահությունը նվազում է այդ կառույցի նկատմամբ:
Հորդորում և կոչ ենք անում անհապաղ միջոցառումներ ձեռնարկել հայտնաբերելու, թե ինչ հանգամանքներում են անհետացել գործի վերաբերյալ նյութերը և դրան համապատասխան ընթացք տալ:

ՀՀ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՎ-Ի ԵՎ ՁԻԱՀ-Ի, ԱՅԴ ՈՒՂՈՐՏՈՒՄ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ. ՖՈԿՈՒՍ ԽՈՒՄԲ ՔՆՆԱՐԿՈՒՄ

2021թ.-ի հուլիսի 2-ին տեղի ունեցավ առաջին ֆոկուս խումբ քննարկումը ՀՀ երիտասարդների հետ «Երիտասարդությունը որպես ՄԻԱՎ համաճարակի տեսակետից թիրախ խումբ ճանաչելու արդիականության» վերաբերյալ հետազոտության շրջանակներում:
Ֆոկուս խմբի փորձագետն էր բ.գ.թ. Հովհաննես Մադոյանը:
Տվյալ ֆոկուս խումբ քննարկման մասնակիցներն էին ՀՀ բուհերում ուսանող արական սեռի երիտասարդները:

Հանդիպման նպատակն էր քննարկել ՀՀ երիտասարդության իրազեկվածությունը ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի վերաբերյալ, ՀՀ երիտասարդների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրականացվող աշխատանքները, երիտասարդության շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ թիրախային աշխատանքներ իրականացնելու կարևորության մասին:
Քննարկվեցին և հնչեցին կարծիքներ նաև «Առողջ ապրելակերպ» առարկայի շրջանակներում դասավանդվող ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի թեմայի մասին և ընդհանուր առմամբ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ ինչպիսի՞ միջոցառումներ է ցանկալի իրականացնել երիտասարդության շրջանում:

ՄԻԱՎ-Ի ԱՐԱԳ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԹՔԻ ՄԻՋՈՑՈՎ

- ԳԱՂՏՆԻ, ԱՆԱՆՈՒՆ ԵՎ ԱՆՎՃԱՐ
- ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ 20 ՐՈՊԵԻՑ
- ՁԵԶ ՀԱՐՄԱՐ ՑԱՆԿԱՑԱԾ ՎԱՅՐՈՒՄ

+37460478989

ՄԻԱՎ-ի թեստավորման ուղեցույց | ԻՆՉ Է ՄԻԱՎ-Ը և ՁԻԱՀԸ | ԵՂԻՐ ԻՐԱԶԵԿ | Կանխարգելենք ՄԻԱՎ-ը (PrEP)

Տվյալ հետազոտության համատեքստում նախատեսվում են նաև ևս երեք ֆոկուս խումբ հանդիպում-քննարկումներ՝ երիտասարդների տարբեր խմբերի, մասնավորապես բուհերում ուսանող աղջիկների, բուհերում չսովորող երիտասարդ աղջիկների և տղաների հետ՝ հետազոտության համար առավել համապարփակ պատկեր ստանալու համար:

ՀԵՐԹԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Շարունակվում է համագործակցությունը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի և ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի միջև՝ կրթահամալիրում վերապատրաստում անցնող ոստիկանների համար դասընթացների կազմակերպման համատեքստում:
Համագործակցության շրջանակներում 2021թ.-ի հուլիսի 7-ին և հուլիսի 8-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի փորձագետ, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի իրավաբան Նուշիկ Տեր-Մովսիսյանը կրթահամալիրի սաներին ներկայացրեց «Խաղաղ հավաքների ազատության իրավունք» և «Խոշտանգումներից զերծ մնալու իրավունք» թեմաները:

Առաջին օրը՝ հուլիսի 7-ը, նվիրված էր «Խաղաղ հավաքների ազատության իրավունք» թեմային, որի շրջանակներում փորձագետը ներկայացրեց ոլորտը կարգավորող կարևոր նորմատիվ իրավական ակտերը, հավաքների տեսակները, իրազեկումը, ոստիկանության գործողությունները և դերը, միջազգային պրակտիկան, օրենսդրությունը, փոքրամասնությունների հավաքների իրավունքը:
Հուլիսի 8-ի դասընթացի թեման էր «Խոշտանգումներից զերծ մնալու իրավունքը»: Թեմայի շրջանակներում նեկայացվեցին խոշտանգման սահմանումը, խոշտանգման և վատ վերաբերմունքի տարանջատումը՝ որպես ՄԻԵԿ 3-րդ հոդվածի խախտման սահմանում, քննարկվեցին խոշտանգման ենթարկված զոհերի գործերի քննության առանձնահատկությունները, խոշտանգման և վատ վերաբերմունքի միջազգային չափանիշերը և ՄԻԵԴ-ի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ներկայացվեց ՀՀ քրեակատարողական հիմնարկներում, ոստիկանությունում, բանակներում, խոշտանգումների դեպքերի վիճակագրություն:
Դասընթացը եզրափակվեց ակտիվ քննարկումներով և հարց ու պատասխանով:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի հետ համագործակցությամբ նման ձևաչափով դասընթացներ է կազմակերպում դեռևս 2019 թվականից և այս համագործակցությունը լինելու է շարունակական:

ՔՈԼԵՋՈՒՄ ՈՒՍԱՆՈՂԻՆ ԾԵԾԻ ԵՆ ԵՆԹԱՐԵԿԼ ԻՐ ՍԵՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

2021թ-ի հունիսի 29-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ (ՆՍՀԿ) է դիմել նույնասեռական անձ Ս.Հ.-ն (անունը փոխված է): Վերջինս հայտնել է, որ քոլեջում իր սեռական կողմնորոշման մասին տեղեկության տարածվելուց հետո մշտապես խնդիրներ է ունեցել քոլեջի ուսանողների հետ: Վերջիններս պարբերաբար վիրավորել են, ծաղրել: Ս.Հ.-ն փորձել է հեռու մնալ ուսանողներից, որպեսզի իրավիճակը չբարդացնի: Սակայն հերթական անգամ նաև չի հաջողվել խուսափել միջադեպից, և վիճաբանություն է սկսվել: Մի խումբ ուսանողները ծեծի են ենթարկել Ս.Հ.-ին, որի հետևանքով վերջինս մարմնական լուրջ վնասվածքներ է ստացել: Խնդրի կարգավորման համար Ս.Հ.-ն դիմել է քոլեջի ղեկավարությանը: Սակայն, ցավոք նրանց կողմից որևէ քայլ չի ձեռնարկվել:
Հերթական անգամ, ուսանողների կողմից ծեծի ենթարկվելիս Ս.Հ.-ն ինքնապաշտպանվել է, այնուհետև դիմել ոստիկանություն:

Ոստիկանները Ս.Հ.-ին ծեծի ենթարկած անձանց բերման ենթարկելու փոխարեն՝ նրան են բերման ենթարկել: Իրավապահ մարմինների կողմից դեպքի առթիվ քրեական գործ չի հարուցվել, չնայած ակնհայտ հանցակազմի առկայության պայմաններում:

ՆՍՀԿ իրավաբանի կողմից տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն: Գործը գտնվում է ՆՍՀԿ իրավաբանների/փաստաբանների հսկողության ներքո:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը կարևորում է նման իրավիճակներում համապատասխան կառույցների կողմից խնդրի լուծման ուղղությամբ իրականացվող քայլերը: «Եթե տվյալ դեպքում տնօրինության կողմից քայլեր ձեռնարկվեին, հնարավոր է խուսափեին իրավիճակի հետագա սրացումներից:

ՆՍՀԿ-ն նմանատիպ այլ դեպքեր էլ է բազմիցս արձանագրել, երբ ուսանողները նման ճնշումների ու բռնության պատճառով կիսատ են թողել իրենց կրթությունը: Կազմակերպությունը շարունակում և շարունակելու է գործեր ի շահ մարդու իրավունքների»- նշում է ՆՍՀԿ նախագահը:

ՖՈՆԴԱՀԱՅԹԱՅԹՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՍՊԵՑԻՖԻԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2021 թվականի հուլիսի 28-29-ը Երևանում տեղի ունեցավ երկօրյա դասընթաց «Ֆոնդահայթայթումը և դրա սպեցիֆիկությունը հասարակական կազմակերպությունների համար» թեմայով: Դասընթացին մասնակցում էին Տրանս* անձանց հայաստանյան աշխատանքային խմբում (ՏԱՀԱԽ) ներգրավված

հասարակական կազմակերպությունների («Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ, «Հանուն հզոր ապագայի» երիտասարդական ՀԿ, «Ֆիռլես» իրավապաշտպան ՀԿ, «Հավասարություն բոլորի համար» իրավապաշտպան ՀԿ, «Քալրֆուլ հաուս» սոցիալ-մշակութային և իրավապաշտպան ՀԿ) ներկայացուցիչներ:

Դասընթացը կազմակերպվել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող «Տրանս* քարտեզը ԱԵԿԱ-ում» ծրագրի շրջանակներում Առողջության, իրավունքի, գենդերային և սեռական բազմազանության եվրասիական կոալիցիայի (ԵԿՈՄ) ֆինասական և տեխնիկական աջակցությամբ:
Այն միտված էր մասնակիցների շրջանում ֆոնդահայթայթման մեթոդների և գործիքակազմի, գրանտային հայտերի մշակման վերաբերյալ գիտելիքների բարձրացմանը:

Դասընթացի մեկնարկից առաջ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը ողջունեց մասնակիցներին, ներկայացրեց դասընթացի թեման և կարևորեց Առողջության, իրավունքի, գենդերային և սեռական բազմազանության եվրասիական կոալիցիայի (ԵԿՈՄ) հետ համագործակցությունը:

Դասընթացի առաջին օրը ԵԿՈՄ-ի կարողությունների զարգացման համակարգող, դասընթացավար-փորձագետ Ելենա Գերմանը մասնակիցներին ողջունելուց, ծանոթանալուց և ակնկալիքները վեր հանելուց հետո ներկայացրեց

ֆոնդահայթայթման հիմնական հասկացությունը, ռեսուրսների տեսակները, ինչից և ինչպես սկսել ֆոնդահայթայթումը, ֆոնդահայթայթման գործիքները, էթիկական հարցեր: Դասընթացի երկրորդ օրը նվիրված էր պրակտիկ վարժությունների և խմբային աշխատանքների, որոնց շնորհիվ մասնակցիները կիրառեցին առաջին օրը ստացած տեղեկությունը՝ խոսելով գրանտային հայտի ցիկլից, ծրագրային առաջարկի մշակման փուլերից, գրագետ ձևակերպումներից, ծրագրային բյուջեի կազմման յուրահատկություններից:
Դասընթացը անցավ չափազանց ակտիվ մթնոլորտում:
Դասընթացի ավարտին ակտիվություն ցուցաբերած մասնակիցները ստացան դասընթացին մասնակցությունը փաստող հավաստագրեր:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ
NEW GENERATION
HUMANITARIAN NGO

www.ngngo.net

Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը: